

ՀԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐԻ ՄՈՏ

Երևանը առաջին անգամ գրավոր աղբյուրներում հիշատակվում է Է դարում, բայց շնորհիվ հնագիտական պեղումների սովետական հնագետներին հաջողվեց հավարամյա հողաշերտերի տակից հայտնաբերել աշխարհի ամենահին քաղաքներից մեկը: Այդ հայտնագործությունը եկավ հարստացնելու Հայաստանի նախաբնիկների մասին մեր ունեցած տեղեկությունները: Վանում Արգիշտի թագավորի թողած սեպագիր արձանագրություններում հիշատակություն կա այն մասին, որ ինքը՝ Արգիշտին, 6600 գերիների ձեռքով կառուցել է Էրեբունի քաղաքը, սակայն արձանագրություններում չէր հիշատակված քաղաքի տեղը: Երկարատև պեղումներից և արձանագրություններից հայտնի դարձավ, որ Արգիշտին Էրեբունի քաղաքը կառուցել է ներկա Երևանից քիչ հեռու, Նոր Արեշի և Վարդաշենի մոտ Արինբերդ կոչված բլրի վրա: 1950 թվականին անվանի ուրարտագետ Բ. Բ. Պիոտրովսկու և Կ. Լ. Հովհաննիսյանի ղեկավարությամբ Արինբերդում շուրջ 50 հեկտար տարածության վրա կատարվեցին պեղումներ: Այդ պեղումների ընթացքում, բացի բազմաթիվ մշակութային արժեքներից, գտնվեց մ. թ. ա. 783 թվականին Էրեբունի քաղաքի կառուցման մասին սեպագիր արձանագրությունը, որը հանդիսանում է աշխարհի ամենահին քաղաքներից մեկի՝ մեր Մայր Երևանի ծննդյան վկայականը: Երևանը իր անունը ստացել է ուրարտական Էրեբունի բերդից: Երևանի անվան ծագման շուրջ եղել են շատ կարծիքներ: Բերենք դրանցից մի քանիսը:

Հատկապես ԺԹ դարից սկսած հայագիտությամբ զբաղվողներից շատերը փորձել են մեկնաբանել Երևան անվան ծագումը: Հայ պատմագրության ականավոր ներկայացուցիչներից միքայել վրդ. Չամչյանն ու Հակոբ Պատրիարք Նալյանը փորձել են Երևան տեղանունը կապել Երվանդյան դինաստիայից Օրանտես-Երվանդ թագավորի (Գ դարի վերջը մ. թ. ա.) անվան հետ, Երվանդյանների մայրաքաղաքը՝ Երվանդաշատը շփոթելով Երևանի հետ: Ըստ պատմահայր Մովսես Խորենացու, Երվանդաշատը կառուցված էր Արաքսի և Ախուրյանի միացման տեղում: Հետագայում ռուս հնագետ և խալդագետ Մ. Վ. Նիկոլսկին փորձեց առաջին անգամ գիտականորեն բացատրել Երևան տեղանվան ծագումը: Ըստ Նիկոլսկու, Երևան անունը ծագել է Էրիահինի հին երկրից, որը հիշատակվում է Սևանա լճափին Ծովինար գյուղի մոտ մի մեծ ժայռի վրա փորագրված ուրարտական Ռուսա առաջինի (730—714 մ. թ. ա.) մի սեպագիր արձանագրության մեջ, որտեղ 23 նվաճված երկրների թվում նշված է նաև Էրիահինի երկրի անունը: Նիկոլսկին ենթադրում է, որ Երևանի տերիտորիայում բնակվող հնագույն Էրի կոչվող ցեղի անունով երկիրը կոչվել է Էրիահինի և նրա կենտրոնն էլ անվանել են Էրի-ավան=Երևան: Հետագայում այս բոլոր կարծիքները համարվեցին ոչ գիտական և մերժվեցին: Սովետահայ ուրարտագետներին հաջողվեց, հայ-ուրարտական լեզվական որոշ օրինաչափությունների հիման վրա, առաջին անգամ այն կարծիքը հայտնել, թե հնարավոր է նույնացնել Էրեբունի և Երևան անունները: Այս ճիշտ ենթադրությունը հե-

տագայում ավելի հաստատվեց, երբ 1958 թվականին հայտնաբերվեց կա մի արձանագրություն, որտեղ որոշակի կարդացվում էր Էրեբունի: Այժմ արդեն գիտականորեն վերջնականապես ապացուցվել է, որ Երևան տեղանունը ծագել է Էրեբունի տեղանունից: Այսպիսով, մեր սքանչելի մայրաքաղաքը իր հնությամբ և տարիքով դասվում է հնադարյան քաղաքներ Հռոմի և Բաբելոնի շարքին:

Շուրջ 2760 տարի Երևանում երբեք չի դադարել կյանքը: Մեր մատենագիրների մոտ առաջին անգամ Երևանի անունը, իբրև նշանավոր ավան, հիշվում է 607 թվականին հրավիրված Դվինի եկեղեցական ժողովում, որին մասնակցել է նաև երևանցի Դավիթ եռեցը կամ, ինչպես «Գիրք թղթոց»-ում է ասվում, «Դավիթ Երևանայ»[1]: Դժբախտաբար, բացի «Գիրք թղթոց»-ի այս հիշատակությունից, ընդարձակ տեղեկություններ չկան մեր միջնադարյան մատենագիրների մոտ: Է դարի մեր նշանավոր պատմիչներից մեկը՝ Սեբեոսը, խոսելով 642—643 թվականների արաբական արշավանքների մասին, որոնք տեղի են ունեցել Թեոդորոս Ռշտունու ու Ներսես Շինող կաթողիկոսի օրոք, իր Պատմության ԽԲ (42) գլխում գրում է. «Եւ եղեւ ի գալ միւսում ամի եկն զատուրն Իսմայելի յԱտրպատականն, եւ բաժանեցան յերիս, առաջ մի յԱյրարատ, և առաջ մի ի Սեպհական գնդին՝ արշաւեաւ սփռեցան և հարեալ զամենայն կողմանսն զայնոսիկ որով սուսերի, առին զաւար և զգերութիւն: Եւ եկին ժողովեցան ի յԵրևան և մարտեան ընդ բերդին, և ոչ կարացին առնուլ»[2]: 643 թվականի ամռանը, երբ արաբական տասը հազարանոց բանակը անցնում էր Հայաստանի Կոգհովիտ գավառը, Թեոդորոս Ռշտունին իր փոքրաթիվ ուժերով արաբներին ծուղակի մեջ է գցում և եղբարք Սարակ կոչվող լեռան մոտ մեծ ջարդ է տալիս նրանց: Այս հաղթանակը ոգևորում է նաև Երևանի բնակիչներին և նույն թվականին, երբ արաբական բանակները հարձակվում են Երևանի վրա, նրա բնակիչներից կրում են խայտառակ պարտություն: Այս մասին հայրենասիրական շնչով գրում է Սեբեոս եպիսկոպոսը իր Պատմության մեջ (Է դար):

Հետագայում Երևանի մասին հիշատակում է Թ դարի վերջի և Ժ դարի սկզբի մեր նշանավոր և հայրենասեր պատմիչներից Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին: Նա իր «Հայոց պատմություն» գրքում գրում է. «Յայսմ ժամանակի ասեն լինել զկռիւ, որ ի քաղաքագիւղն Երեւանի, զոր և բաւական քեզ ուսուցանեն զայն պատերազմի զհանգամանս որ նախքան զմեզ զնա պատմագիրեցին»[3]: Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին Երևանի կռվի մասին իր հաղորդած տեղեկությունը վերցրել է Սեբեոսից:

Երևանի մասին հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել նաև միջնադարյան մեր գրիչների մոտ, որոնք ձեռագիրը արտագրելուց և ավարտելուց հետո իրենց ժամանակակից դեպքերը գրի էին առնում: Նրանց թողած հիշատակարանները շատ հարուստ նյութ են մատակարարում մեր բանաստեղծներին համապատասխան ժամանակաշրջանի շատ փաստեր ու դեպքեր ճշտելու և վերականգնելու համար: Այդ հիշատակարաններից մի քանիսում տեղեկություններ են պահպանվել մեր մայրաքաղաքի մասին: Վարդան Այգեկցու (ԺԲ—ԺԳ դդ.) առակների ժողովածուի գրիչ Տերտեր Երևանցին իր չափածո հիշատակարանում գրում է.

«...Յերկրէն եկի այն Վրացտուն,
Ի քաղաքէս այն պատուական,
Որ իր անունն է Երևան,
Խոր-Վիրապին նա հարևան»:

Նույն այս գրիչը Վարդան Այգեկցու մի այլ ձեռագրի չափածո հիշատակարանում գրում է.

«Յերկրէն եկի այն Հայաստան,
Ի քաղաքէս այն պատուական,
Որ իր անունն է Երևան
Ու Վիրապին ու Էջմիածնին է
հարևան»[4]:

ԺԵ դարում Թովմա վարդապետ Մեծոփեցին Երևանը անվանել է արդեն գյուղաքաղաք: Թովմա վարդապետ Մեծոփեցու ժամանակակից Գրիգոր վրդ. Խլաթեցին իր «Հիշատակարան աղէտից ի ժամանակիս մերում» չափածո պատմական վիպասանության մեջ, գրված 1408 թվականին, Երևանը հիշում է որպես «մեծ ավան»: Հայտնի է, որ 1388 թվականին Լենկ Թեմուրի հրոսակախմբերը արշավել են Հայաստան և Երևանում կոտորած սարքել: Ահա այդ կոտորածի մասին Գրիգոր Խլաթեցին գրում է.

---

[1] Տե՛ս «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 151:

[2] Սեբեոսի եպիսկոպոսի պատմություն, Եր., 1939, էջ 118:

[3] *Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի*, Պատմութիւն հայոց, Մոսկվա, 1853, էջ 52—53:

[4] *Լ. Ս. Խաչիկյան*, ԺԴ դարի հիշատակարաններ, Եր., 1950, էջ 287, 329:

«...Եւ յԵրևան **մեծ աւանին**
Արս հինգ հարիւր կոտորեցին»[5]:

1477 թվականին Ստեփանոս գրչի կողմից արտագրված ավետարանի հիշատակարանում նույնպես Երևանը հիշվում է որպես «գյուղաքաղաք»: «...Վասն որոյ ցանկացող եղեալ այսմ աստուածային և լուսապարդ սուրբ աւետարանէս ոմն ի **գեղաքաղաքէն** Երեւանայ՝ Արապ անուն, և ետ գրել կսա իմոյ անարժանութեանս ձեռամբ եղկալի աբեղայի...»[6]: Է—ԺԲ դարերում Երևանի մասին անցողիկ կերպով հիշատակում են նաև Ղևոնդ պատմիչը (Ը դար), Ասողիկը (ԺԱ դ.) և Սամվել վրդ. Անեցին (ԺԲ դ.):

Դժբախտաբար, նշված հեղինակները նոր տեղեկություն չեն ասում Երևանի մասին, այլ այս կամ այն կերպ կրկնում Սեբեոսին և Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցուն:

Միջին դարերում Երևանը առավել հայտնի է դարձել, երբ արդեն կործանվել էին երբեմնի մեր շենշող ու վաճառաշատ մայրաքաղաքները՝ Դվինը, Արմավիրը, Արտաշատը, Վաղարշապատն ու սքանչելի Անին: Երևանի դերը բարձրանում է հատկապես թուրք-պարսկական երկարատև պատերազմների ժամանակաշրջանում: ԺԳ—ԺԴ դարերում Երևանը դառնում է միջնադարյան առևտրական քաղաք, կապեր է հաստատում Մերձավոր Արևելքի, Թավրիզի, Նախիջևանի, Էրզրումի, Թիֆլիսի և այլ առևտրական կենտրոնների հետ: 1949—50 թվականներին Երևանում կատարված պեղումներից պատահականորեն հայտնաբերված մոնղոլական, պարսկական, բյուզանդական և այլ երկրների բազմաթիվ պղնձյա, արծաթյա և ոսկյա դրամները, որոնք պատկանում են ԺԳ և ԺԴ դարերին, հաստատում են, որ իրապես միջին դարերում Երևանը եղել է նաև աչքի ընկնող առևտրական քաղաք:

ԺԵ դարի 30-ական թվականներին, երբ Հայաստանը գտնվում էր Կարա-Կոյունլուների իշխանության ներքո, Երևանը դառնում էր Արարատյան դաշտի և ողջ Արևելյան Հայաստանի վարչական ու քաղաքական կենտրոն: ԺԵ դարը Հայաստանի և Հայ Եկեղեցու համար նշանակալից է եղել նաև նրանով, որ 1441 թվականին Կիլիկիայից՝ Սսից Ս. Էջմիածին փոխադրվեց ամենայն հայոց կաթողիկոսական Աթոռը, և Կիրակոս վրդ. Վիրապեցին ընտրվեց Ամենայն Հայոց կաթողիկոս: Քաղաքական ու կրոնական նշանավոր այս դեպքերը մանրամասն նկարագրել է Թովմա վրդ. Մեծոփեցին: Նա, որպես ականատես, Կիլիկիայից և Հայաստանի զանազան գավառներից Երևան հավաքված շուրջ 300 բարձրաստիճան հոգևորականների և իշխանների հետ մասնակցել է ազգային-եկեղեցական ժողովին: «Եւ ապա ուրախութեամբ մեծաւ և անէրկբայ յուսադրութեամբ ելեալ գնացաք... և ապա պատահեալ դիպեցաք մեծ վարդապետին մերոյ և առեալ եկաք ի գիւղաքաղաքն Երեւան աստ էր տեսանել զուրախութիւն և ցնծութիւն ամենայն մերային ազինս»[8]: Կաթողիկոսական Աթոռի տեղափոխությունից հետո Երևանը աստիճանաբար դառնում է նաև Հայաստանի տնտեսական ու մշակութային կյանքի կենտրոն:

ԺԶ դարում Երևանը գտնվում էր պարսիկների տիրապետության տակ և Երևանի խան էր կարգված Ռևան խանը, որը, իմիջիայլոց, շինել էր Երևանի բերդը: Սրա ժամանակ քաղաքը սկսում է ավելի շենանալ ու ծաղկել, բայց, դժբախտաբար, բարգավաճումն ու ծաղկումը երկար չեն տևում, որովհետև դրանից հետո շուրջ 200 տարի Երևանը կռվախնձոր է դառնում օսմանյան թուրքերի և պարսիկների միջև, որոնք իրար ձեռքից քաղաքը հափշտակում են շուրջ 14 անգամ: 1590 թվականին պարսկական գահն է բարձրանում Շահ Աբասը, որը հաշտություն է կնքում Օսմանյան կառավարության հետ՝ Երևանը իր շրջակայքով թողնելով օսմանցիներին: Բայց 1604 թվականին Երևանը կրկին ետ է խլվում, և Ամիրգունա խանը (իսլամացած վրացի) կուսակալ է նշանակվում Երևանում: Սա, ըստ Զաքարիա պատմիչի, «Այր քաջ և սրտապինդ, անահ և աներկիւղ, շէնարար և սիրող քրիստոնէից. սա ի տիրելն իւրում Երեւանայ՝ իսկոյն ձեռն նախ սկսաւ շինել զբերդն և ապա ապարանս և զայգիս և զբուրաստանս և զպարտէզս և հանել զառուս և առաւելով զջուրս»[9]: Ամիրգունա խանը, ըստ Առաքել վրդ. Դավրիժեցու, մի քանի անգամ ասպատակել է Կարինը, Մուշը, Վանը և բավական բնակչություն տեղահանելով վերաբնակեցրել է Արարատյան նահանգում՝ Երևանի և Էջմիածնի միջև ընկած գյուղերում: Օսմանցիները չհաշտվելով 1604 թվականի ամոթալի պարտության հետ՝ 1616 թվականին թուրքական Ահմեդ փաշայի

[5] *Լ. Ս. Խաչիկյան*, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, Եր., 1958, էջ 397:

[6] Նույն տեղում:

[7] Այս մասին տե՛ս *Կ. Ղաֆադարյան*, Երևանի Կաթուղիկեի նորահայտ հուշարձանի վիմական արձանագրությունները, ՀԽՍՀ Պատ. և Գրակ. ինստիտուտների Տեղեկագիր, Եր., 1938, Գիրք առաջին, էջ 173:

[8] *Կ. Կոստանյանց*, Թովմա Մեծոփեցու հիշատակարանը, Թիֆլիս, 1892, էջ 69:

[9] *Ղ. Ալիշան*, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 303:

հրամանատարությամբ մեծաքանակ զորքով գալիս են Երևանի վրա, 2 ամիս շրջապատում են այն, բայց չեն կարողանում գրավել: 1635 թվականին Սուլթան Մուրադը 70000 զորքով նորից հարձակվում է Երևանի վրա և 9 օր կատաղի կռիվներից հետո հաջողվում է գրավել: Նա կատաղությունից հրամայում է Թահմազ դուլի խանին ջղթայակապ ուղարկել Պոլիս, իսկ քաղաքը տակն ու վրա է անում՝ բնակիչներին սրի քաշելով: Սուլթան Մուրադը Երևանը գրավելուց հետո 12 հազար զորք է թողնում այնտեղ, իսկ ինքը թուրքական բանակի գլուխ անցած՝ հետապնդում է պարսկական բանակին, որը շարժվում էր Թավրիզի ուղղությամբ:

Շահ Աբասի 1604 թվականի կազմակերպած հայերի բռնի գաղթը, որի մասին այնքան սրտաճմլիկ տողերով ու հայրենասիրական շնչով գրել է Առաքել վրդ. Դավրիժեցին, մեծ հարված է հասցնում Հայաստանին: Դրանից անմասն չի մնում նաև մեր բազմաչարչար մայրաքաղաքը. «Եւ ի ժամանակիս յայսմիկ յԱյրարատեան երկրէն բազում քրիստոնեայք ի հայոց ազգէն և մանաւանդ Երևանայ քաղաքի ժողովուրդէն բնակեալ էին ի մէջ քաղաքին Սպահանոյ»:

Հիշատակության արժանի է 1724 թվականի Երևանի հերոսամարտը, երբ օսմանյան բարբարոս բանակները ներխուժում են Շիրակի դաշտը և Եղվարդի դաշտում պարտության մատնելով պարսկական 12000-անոց բանակը՝ շարժվում են Երևանի վրա: Ամբողջ Երևանը այդ օրերին նմանվում էր մի զորանոցի, կամավոր կերպով հավաքագրվում են վենքի ընդունակ շուրջ 10000 տղամարդիկ ու կանայք դիմադրելու համար օսմանյան բանակին: Թուրքական հրամանատար Աբդուլա փաշան չի կարողանում քաղաքը գրավել, օգնության է կանչում թուրքական զորամասերին, իսկ ապա նաև 3000 եգիպտացիներից բաղկացած մի հարվածային բրիգադայի: Սկզբնական հարձակումը Կոնդ թաղամասի վրա ետ է շպրտվում: Այդ հերոսամարտը ղեկավարում էին Հովհաննես Հանդիբեկյանը, Ղազար Բաբարյանը և ուրիշներ: Թուրքերը այդ անհավասար մարտում կորցնում են շուրջ 6000 մարդ: Երևանցիների հաղթանակը այդ ճակատամարտում փառավոր է լինում, բայց այն ձեռք է բերվում ճակատամարտում զոհված 2000 հայորդիների կյանքի գնով: Թուրքական բանակի երկրորդ հարձակումը ևս ավարտվում է խայտառակ պարտությամբ, բայց Գանձակ և Ղարաբաղ շարժվող թուրքական բանակների օգնությամբ ճնշվում է երևանցիների հերոսական դիմադրությունը, և 1724 թ. հունիսի 7-ին Աբդուլա փաշան մտնում է Երևան ու սրի քաշում ողջ մնացածներին: Վաթսուն օրվա հերոսական պաշտպանությունից հետո թուրքերին հաջողվում է գրավել Երևանը: 1724 թվականի Երևանի պաշտպանությունը հայ ժողովրդի ազատագրական պատերազմների պատմության հերոսական էջերից մեկն է: Այդ հերոսամարտին մասնակցում էին նաև Երևանի մոտիկ ավանների՝ Փարաքարի, Առինջի, Ավանի և մյուս գյուղերի հայորդիները, որոնք մի կամք, մի հոգի դարձած՝ ոտքի ելան հանուն հայրենի քաղաքի, ճիշտ այնպես, ինչպես իրենց հերոս նախահայրերը Ս. Վարդանանց օրերին, գիտակցված մահով անմահանալու:

• Հաճելի է նշել, որ Երևան քաղաքի և ողջ Արարատյան աշխարհի համար օրհասական այդ օրերին Հայաստանյայց Եկեղեցու հայրենասեր պաշտոնյաները, որոնց համար թանկ ու նվիրական էր արյունաքամ հայրենիքի ազատության սրբազան գործը, անմնացորդ կերպով իրենց մասնակցությունը բերին Երևանի պաշտպանության զոհասեղանին: Զորագյուղի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցին, անսահմանորեն ծանր այդ օրերին, մի տեսակ պատերազմական շտաբ էր դարձել, որտեղ Գրիգոր վարդապետի նախագահությամբ ավագների խորհրդակցություններ էին գումարվում, քաղաքի պաշտպանության հետ առնչվող գործնական հարցերի լուծման համար:

1579 թվականի աշնանը օսմանյան Մուստաֆա Լալա փաշան, հետապնդելով պարսկական նահանջող բանակը, գրավում է Երևանը, կողոպտում, հրկիզում և գերության է տանում շուրջ 20000 հայերի: Ժամանակակից հայ տաղասացներից մեկը՝ Հովհաննես տաղասացը, խտացրած գույներով նկարագրել է Երևանի և առհասարակ Արարատյան դաշտի իրական ողբերգական վիճակը այդ օրերին:

Հայր Ղևոնդ Ալիշանը «Այրարատ» աշխատության մեջ հրապարակել է արտասուքով գրված այդ բանաստեղծությունը: Ահա այն որոշ կրճատումներով.

Վայ տանք երկրին Արարատեան
Մայրաքաղաքն ի Երևան
և գեղահան ամենեքեան
ձեռն այլայլգաց գերի անկան...

Երևան քաղաքէն տարար
Շատ սարկաւագ սաղմոսաձայն,
ոմանք պաշտեն վշարական
և քահանայքն վաւետարան...[10]:

[10] *Հայր Ղևոնդ Ալիշան*, Այրարատ, էջ 300—301:

Հետաքրքիր կլիներ իմանալ նաև, թե ինչ մշակութային լուսավորական կյանքով է ապրել Երևանը այդ երկար ու ձիգ դարերի ընթացքում: Դժբախտաբար մեզ չեն հասել տեղեկություններ այդ մասին, բայց աներկբայորեն կարելի է ասել, որ ինչքան էլ մռայլ ու տխուր է եղել Երևանի անցյալը, այնուամենայնիվ նա անմասն չի մնացել հանճարեղ Մաշտոցի պարգևած այբ, բեն, գիմ-ից: Այդ են վկայում Մաշտոցյան Մատենադարանում պահվող թվով 51 ձեռագրերը, որոնք ընդօրինակվել և գրվել են Երևանում: Անշուշտ մեզ հասած սակավաթիվ այդ ձեռագրերի քանակը հեռու է արտահայտելուց այն դերը, որ Երևանը ունեցել է մեր դարավոր մշակույթի պատմության մեջ: Ո՞վ գիտի քանի՜-քանի մեծարժեք ձեռագրեր են անհայտացել ավարառու հորդաների ձեռքերով, որոնք բազմաթիվ անգամ արշավել են Հայաստան, բնականաբար նաև Երևան: Երևանում գրված ձեռագրերը ժամանակագրական տեսակետից մոտավորապես կարելի է դասավորել հետևյալ կերպ. 13-րդ դարից մեզ է հասել մի տոնացույց՝ գրված Նորք գյուղաքաղաքում Սարգիս գրչի ձեռքով:

ԺԴ դարից Երևանում գրված ոչ մի ձեռագիր չի պահպանվել:

ԺԵ դարից պահպանվել է երկու ավետարան և Ս. Գրիգոր Տաթևացի վարդապետի քարոզագրքերից մեկը, որի ընդօրինակմանը մասնակցել է նաև Թովմա վրդ. Մեծոփեցին:

ԺԶ դարից պահպանվել է մի ավետարան:

ԺԷ դարից մեզ են հասել 29 ձեռագրեր:

ԺԸ դարից պահպանվել է 10 ձեռագիր: Ընդամենը՝ 51 ձեռագիր:

Բազմաչարչար Երևանի պատմության տրխուր էջը փակվում է 1827 թվականի հոկտեմբերի 1-ին, երբ ռուսական բանակները հայկական կամավորական գնդերի և ողջ հայ ժողովրդի օժանդակությամբ գրոհով գրավում են և պարսկական դարավոր խավարից ու հետամնացությունից ազատագրում Երևանն ու նրա բազմատանջ ժողովրդին՝ հնարավորություններ ընձեռելով քաղաքի զարգացմանը: Երևանի գրավումը քաղաքական և տնտեսական կարևոր նշանակություն ունեցող երևույթ էր: Հայ ժողովուրդը 1827 թվականին Երևանի ազատագրումը համարում էր հայրենիքի փրկության խորհրդանիշ: Դրա լավագույն վկայությունն են Մեսրոպ Թաղիադյանի, Հարություն Ալամդարյանի և մեծ հայրենասեր ու լուսավորիչ Խաչատուր Աբովյանի գրածները այդ մասին: «Դժոխքի քանդվելը մեղավորների համար էն գինը չէր ունենալ, ինչպես Երևանա բերդի առնելը հայերի համար»,—գրում էր մեծ հայրենասերը: Իսկ այդ բարեպատեհ առիթով, հեռավոր Հնդկաստանից Ներսես Ե Աշտարակեցի Հայրապետին ուղղած մի նամակում Մեսրոպ Թաղիադյանը գրում էր. «Երկրպագցաք աշխարհասասան դրօշակին Արշակունեանց, որ ենջեացն և յարեաւ, եւ այլևս ոչ մեռանի»: «Իմ լաւ քաղաքացիք,—գրում է նա երևանցիներին,—էսպէս երջանիկ բախտի, որ դուք էք պատահել, կարծեմ որ մեր նախնիքն ևս Արշակունի թագաւորութեան ժամանակումն էլ չէին պատահել, վերս տեպետն թագաւորութիւնն իրեանցն էր, սակայն բարբարոսութիւնն եւ վալումն պակաս չէր»[11]:

Ամփոփելով մեր խոսքը Երևանի մասին նրա հիմնադրումից մինչև 1827 թվականի հոկտեմբերի 1-ը ընկած ժամանակաշրջանը, կարելի է ասել, որ ըստ հայտնաբերված արձանագրությունների և գրավոր աղբյուրների, 783 թվականին մ. թ. ա. Երևան-Էրեբունին փոքրիկ բերդից դառնում է գյուղաքաղաք: Ժ դարից Երևանը տարանցիկ ճանապարհների հանգուցակետ է: Այդ հանգամանքը նպաստում է Երևանում առևտրի զարգացմանը: ԺԲ—ԺԳ դարերում Երևանը գյուղաքաղաքից դառնում է վարչական կենտրոն: ԺԵ դարում Երևանը դառնում է Արարատյան աշխարհի կենտրոնը, որին մեծապես նպաստում է Հայրապետական Աթոռի Կիլիկիայից Ս. Էջմիածին փոխադրվելը:

1827 թվականին Երևանում կար 1730 տուն, 7 եկեղեցի, 8 մզկիթ, 7 քարվանսարա: Բնակչության ընդհանուր թիվն էր 11463 մարդ, որի գերակշռող մասը, անշուշտ, մահմեդականներ էին: Ռուսական տիրապետության տակ անցնելուց հետո սկզբնական շրջանում Երևանը դառնում է հայկական մարզի կենտրոն (1828 թ. մարտի 21-ին), իսկ հետագայում (1840 թ. ապրիլի 10)՝ նահանգական կենտրոն: Չնայած այն հանգամանքին, որ Երևանը դառնում է վարչական կենտրոն, բայց և այնպես այնտեղ աչքի ընկնող բարեփոխություններ չեն կատարվում: Ռուսական պետական պաշտոնյաներից մեկը ԺԹ դարի վերջում Երևանը անվանել է «Կավե այրվող վառարան», որտեղ շենքերը, տանիքները, փողոցները շինված էին միայն կավից: Տաղանդավոր արձակագիր Մարիետտա Շահինյանը իր «Ճանապարհորդություն Սովետական Հայաստանում» արժեքավոր գրքում նախասովետական Երևանը նկարագրել է շատ տխուր գույներով: 1901 թվականին Երևանը երկաթուղագծով միացվում է Թբիլիսիի հետ, իսկ 1908 թվականին՝ Ջուլֆայի: Երևանում արդյունաբերա-

[11] *Ա. Հովհաննիսյան*, Դրվագներ Հայ ազատագրական մտքի պատմ., գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 639:

կան ձեռնարկություններ չկային, եթե չհաշվենք Շուստովի կոնյակի գործարանը և մի քանի տնայնագործական արհեստանոցներ: Բավական է ասել, որ 1912 թվականին Երևանի տնտեսական շրջանառությունը եղել է 847.7 հազար ռուբլի, որից 600.9 հազար ռուբլի բաժին էր ընկնում սպիրտային խմիչքներին:

Առաջին աշխարհամարտի և հետագա մի քանի տարիներին Երևանի տնտեսական կյանքը լրիվ քայքայվել էր, ժողովուրդը ծայրահեղ աղքատության ճիրաններում էր գտնվում: Միայն 1919 թվականին Երևանում սովից և հիվանդություններից մահացել են շուրջ 14000 մարդ:

1920 թվականի նոյեմբերի 29-ից հետո ինչպես ամբողջ Հայաստանի, այնպես էլ Երևանի համար բացվում են զարգացման լայն հեռանկարներ: Երևանի առաջին կառուցման գլխավոր հատակագիծը կազմվել է 1924 թ. ակադ. Ալեքսանդր Թումանյանի կողմից: Այն նախատեսված էր 150000 բնակիչ ունեցող քաղաքի համար, որովհետև 20-ական թվականներին Երևանը ուներ մոտավորապես 30000 բնակչություն: Նոր Երևանի անունը ընդմիշտ կապվում է ակադ. Ալեքսանդր Թուսանյանի հետ: Մեր մայրաքաղաքի կառուցման առաջին նախագիծը կազմելուց հետո Թումանյանն այսպես է նկարագրել հին Երևանը:

«Քաղաքում տիրապետողը զորանոցային թախծի գույնն է: Կարծես կառուցել էին հավերժական սգի համար: Շարք-շարք, ինչպես ցնորվածներ, կանգնած էին կավածեփ, կեղտոտ տներ, շատերը այնքան էին գետնին թեքված, որ նեցուկները հասիվ էին պահում: Քարանձավներ, ո՛չ պատուհան կա, ո՛չ ծխնելույզ: Սև ծուխը դուրս էր գալիս դռներից մի մեջ ողողելով և՛ տուն, և՛ փողոց, և՛ անցորդներին: Համատարած խրճիթների մեջ սեպի պես խրված կային քարե բարձր շենքեր, Եվրոպայի օջախներն էին՝ Ասիայի մոխրակույտերի վրա»[12]:

Ամենավառ երևակայություն ունեցող մարդու համար անգամ դժվար է պատկերացնել, որ կավաշեն, 30 հազար բնակիչ ունեցող Երևանը վեց տասնամյակի ընթացքում պիտի դառնար ժամանակակից, զուտ ազգային ճարտարապետությամբ կերտված միլիոնանոց հոյակերտ մի մայրաքաղաք: Երևանը այսօր արդեն մշակութային և արդյունաբերական խոշոր կենտրոն է:

Տասնյակ տնայնագործական ու կիսատնայնագործական ձեռնարկությունների փոխարեն սովետական ժամանակաշրջանում կառուցվել ու կառուցվում են բազմաթիվ ժամանակակից գործարաններ ու ֆաբրիկաներ, որոնց արտադրանքի տեսակները ուղարկվում են ոչ միայն Սովետական Միության տարբեր կենտրոններ, այլև եվրոպական այնպիսի զարգացած երկրներ, ինչպիսիք են Ֆրանսիան, Անգլիան, Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունը, Չեխոսլովակիան և այլ երկրներ:

Երևանը մեր ժողովրդի պարծանքն է նաև որպես գիտության կենտրոն: Այստեղ են գտնվում Գիտությունների ակադեմիան իր 40 գիտահետազոտական ինստիտուտներով, 11 բարձրագույն և 18 միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ և մոտավորապես 160 հանրակրթական դպրոցներ: Երևանում են գտնվում Հայաստանի Պատմության թանգարանը, պատկերասրահը, մեր ժողովրդի փառքը հանդիսացող աշխարհահռչակ Մատենադարանը և մշակույթի ու լուսավորության տասնյակ այլ օջախներ:

Հավերժական Արարատի փեշերին իր թևերն է տարածում մեր չքնաղ մայրաքաղաքը: Հայ ժողովրդի հերոսական աշխատանքով Երևանը մեր աչքի առջև օրավուր ավելի է փոխվում, գեղեցկանում ու վեհանում: 2760 տարեկան մեր մայրաքաղաքը վերջին վեց տասնամյակների ընթացքում հայ ժողովուրդը կառուցեց մեծ սիրով ու կարոտով՝ նրա մեջ տեսնելով անցյալի ողբերգականորեն կորցրած մեր բոլոր մայրաքաղաքները: Դարերով կուտակված այդ կարոտով մեր ջինարար ժողովուրդը մայրաքաղաքի կառույցներում վերականգնեց Վանի ու Անիի, Դվինի ու Վաղարշապատի, Զվարթնոցի ու մեր մյուս սրբությունների ընկած խոյակներն ու կամարները, որպեսզի Երևանի լայնահուն փողոցներով անցնելիս վաղուց կորցրած անցյալի մեր քաղաքների ու մայրաքաղաքների կարոտն առնի ու մեղմի կորստյան այն մրմուռը, որ հազարամյակներ անթեղված է մնացել մեր ժողովրդի հոգում:

Երևանը, հիրավի, մեր ազգային հպարտությունն է, որը մշտավառ փարոսի նման իրեն է ձգում, տուն է կանչում ի սփյուռս աշխարհի ցրված բոլոր հայորդիներին: Այսօրվա մեր շենշող մայրաքաղաքը համայն աշխարհի առջև հաստատում է, որ կա, ապրում է ու պիտի ապրի հայ ժողովուրդը:

ԵՂԻՇԵ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

[12] Տե՛ս Երևանի հոբելյանը, Երևան, 1972, էջ 134: